

ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԸ
V ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Ա. Լ. ՅՈՒՋԲԱՇՅԱՆ

Ա. Ներկան իր առաջնային իմաստով: Հայերենի, մասնավորապես գրաբարի բառի ժամանակահատվածին ձևերի և նշանակությունների քննությունը հայերենագիտությանը մշտապես զբաղեցնող հարց է: Այս հոդվածում մենք փորձում ենք գտնել այն բոլոր հնարավոր գործածություններն ու սրանք պայմանավորող կաղապարները, որոնք բնորոշ են եղել ներկայի բայաձևերին դասական պարբերում:

Մասնական եղանակի ներկա ժամանակաձևը գրաբարում ունեցել է համադրական կառուցվածք և արտահայտվել բայահիմքով ու համապատասխան վերջավորություններով: Այս բայաձևերը պահպանել են հիմք լեզվի ներկայի կազմության առանձնահատկությունները. կազմվում են բայական բներից, առանց որևէ հավելման: Ներկայի դիմային վերջավորություններն են՝

Եզակի	Հոգնակի
-մ (mi(ō))	-մք (mes)
-ս (si[(e)su])	-ւք (te(s))
-յ (ti[(e)ti])	-ն (nti[(o)nti]) ¹

Ինչպես հայերենի զարգացման մյուս փուլերում, այնպես էլ գրաբարում սահմ. եզանակի ներկա ժամանակի բայաձևերը բազմիմաստ են:

Ներկա ժամանակի անփոփոխակալին իմաստը բնորոշվում է համընթացության հատկանիշով: Այն ցույց է տալիս խոսելու պահին համընթաց գործողություն և ունի բազմաթիվ դրսևորումներ:

ա) Կ ո ն կ ի ռ ե տ ն ե Ր կ ա: Ցույց է տալիս խոսելու պահին սկսված և ընթացքի մեջ գտնվող գործողություն: Այս կիրառությամբ է, որ խոսելու պահը և ներկա ժամանակը նույնանում են: V դարի մատենագրության մեջ կոնկրետ ներկան հանդիպում է ավելի քիչ՝ ի տարբերություն ընդհանրական ներկայի և պատմական ներկայի: Ի դեպ, այս ներկաների տարբերակումը հնարավոր է միմիայն շարակարգում (контекст): Կոնկրետ ներկան հանդիպում է հատկապես մենախոսություններում, երկխոսություններում, նամակի կամ հրովարտակի ուղղակի մեջբերումներում, այսինքն՝ բոլոր այն դեպքերում, երբ անմիջապես մեկը գրում է մյուսին. «...և համեստ բանիւք յառաջ մատուցեալ՝ տալին պատասխանի թագաւորին. «Խնդրեմք ի քէն, արքայ քաջ. ունկնդիր սակաւ բանից մերոց, և քաղցրութեամբ լուր զոր ասելոցս եմք: Քանզի յիշեցուցանեմք քեզ զժամանակն Շապհոյ արքայից արքայի, որ էր հայր հաւուն քո Յազկերտի, և ետ նմա Աստուած զերկիրն Հայոց ի ծառայութիւն սո-

¹ Ներկա ժամանակի դիմային վերջավորությունների ծագման մասին մանրամասն տե՛ս Դ. Բ. Ժ ա յ ա յ յ ա ն. Сравнительная грамматика армянского языка. Ереван, 1982, с. 169.
2. Ա ճ ա ո յ ա ն. Կիականություն հայոց լեզվի. հ. 4, գիրք Ա, էջ 371—372: Բ. Ղ ա Ր ա Վ Յ Ր Ա Ն. Հին հայերենի խոնարհման համակարգի ծագումը. Երևան, 1961, էջ 87—108: Ս. Ղ ա Վ ա Ր Յ ա ն. Հայոց լեզվի համառոտ պատմություն. Երևան, 1981, էջ 109—110 են:

վին օրինօք, որով և մեք իսկ վարիմք այժմ...»² «Փախստական լինի կաղմոս առ Հայկ, քաջընթացիկս առաջի իւր առաքէ. Գիտեա, ասէ, ով մեծդ դիցա-զանց, զի դիմեալ զալ ի վերայ քո Բէլ յաւերժիւք քաջօք, և երկայնադիօք, հասակօք սկայիւք մրցողօք: Եւ իմացեալ իմ զմերձ լինելն նորա ի տուն իմ, փախեալ, և զսմ աւասիկ տալնապաւ»³:

Ի տարբերություն նշված բայաձևերի, լինի և առաջին բայաձևերը պատմական ներկայի իմաստ են արտահայտում. «Համբառնամ առ քեզ տէր զաշ իմ բոլորով սրտիւ իմով. կարդամ առ քեզ Քրիստոս աստուած...»⁴:

Նոսելու պահի հաճախ ընդգծվում է այնպիսի բառերով, ինչպիսիք են ալմ, աւասիկ, ահաւասիկ, այսաւր, ահա, սւրդ ևն. «Եւ ահա մատուցանեն զերկրպագութիւն արեգական» (Եղիշէ, 50): «Այսօր զնոյն հրաման տամ ամենեցուն» (Եղիշէ, 131):

բ) Հնդհանրական ներկայ: Յուլյց է տալիս ժամանակային սահմանափակում չունեցող գործողություններ: Բոլոր ժամանակների համար ընդունելի ճշմարտությունները, մշտական հատկանիշների բնութագրումները, փիլիսոփայական դատողություններն արտահայտվում են ներկա ժամանակի բայաձևերով. «...Երթեալ Արտաշիսի ի տեղին, ուր խառնին Երասխ և Մեծամօր...» (Մհ, 176): «Այլ բնաւ իսկ, ասեն, ոչ ուրեք մտանէ արեգակն և զի ոչ մտանէ՝ անտի յայտ է, զի ցայգ ի նորա լուսոյն ի լուսնի ամանն լոյս ծագէ, քանզի ինքն երթեալ հեռացեալ յայլ կողմանս երկնիցս գտանի»⁵:

Հնդհանրական ներկայի դանդաղ գրասերություններով հարուստ է Եզնիկի «Եղծ աղանդոցը»: Սա պայմանավորված է աշխատության բովանդակությամբ:

գ) Առաժակական ներկայ⁶: Առած-ասացվածքները, թեև մոտ խոսքերը, կենսական փիլիսոփայության իմաստալից եզրահանգումներն արտահայտվում են ներկա ժամանակի բայաձևերով. «Ամենայն տուն և թագաւորութիւն՝ որ յանձն իւր բաժանի, ոչ կարէ կալ հաստատուն» (Եղիշէ, 8):

Առածական ներկայի լավագույն գործածությունների ենք հանդիպում Եղիշի երկում. «Որ զմահ ոչ գիտէ, երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, ոչ երկնչի ի նմանէ: Եւ այս ամենայն շարիք մտանեն ի միտս մարդոյ յանուսումնութենէ: Կոյր գրկի ի ճառագայթից արեգական, և տգիտութիւն գրկի ի կատարեալ կենաց: Լաւ է կոյր աշօք, քան կոյր մտօք» (Եղիշէ, 14):

դ) Սովորույթի ներկայ: Կրկնվող, սովորույթ զարձած գործողությունները նույնպես արտահայտվում են ներկա ժամանակի բայաձևերով: Այն անփանվում է հաւ կրկնության ներկա. «Քանզի յորժամ մեք ասեմք՝ թէ սիք շնչէ, ստորնեայք ասեն՝ այս շնչէ. և վասն տարածութեանն միայն և արագութեան կոչին հրեշտակք, և զևք և հոգիք մարդկան՝ ողեղէնք, որ է հոգմեղէնք» (Եզնիկ, 92):

Ասել, կոչել, անվանել, բարգմանել բայերի ներկա ժամանակի երրորդ դեմքով զրված ձևերը, երբ հանդես են գալիս բոլորի կողմից ընդունված իրողությունների հաստատման գործառնությամբ, միշտ արտահայտում են ներկա ժամանակի իմաստ՝ անկախ շարահյուսական միջավայրից: Այս կիրառությունը

² Եղիշի վասն վարդանայ եւ հայոց պատերազմին. Նրեան, 1937, էջ 45 (այսուհետեւ՝ Եղիշէ և էջը տեքստում):

³ Մովսիսի Նորենացոյ Պատմութիւն հայոց. Տփղիս, 1913, էջ 34 (այսուհետեւ՝ Մհ):

⁴ Գիւրգ աղօթից սրբոյ հօրն մերոյ Եփրեմի խորին Ասորոյ Շուշի, 1858, էջ 64 (այսուհետեւ՝ Եփրեմ Ասորի):

⁵ Եզնիկայ Կողբացոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի «Եղծ աղանդոց». Վենետիկ, 1826, էջ 213—214 (այսուհետեւ՝ Եզնիկ):

⁶ Առածական, սովորույթի, կրկնության ներկա տարբերակումները պայմանական են այն իմաստով, որ նրանք կարող են համարվել ընդհանրական ներկայի գրասերություններ: Բայց քանի որ իմաստային տեսակետից կան նրբերանգային տարբերություններ, ուստի նրանց առանձնացումը նախընտրելի է:

հաճախաբար է. «Դուին կոչի, որ քարգմանի բլուր...» (Մհ, 265): «...վախճանեցաւ... ի վաղարշապատ քաղաքի, գոր և նոր քաղաք անուանեն»⁷:

Վկայել, հաստատել, ստել, ցուցանել բայերի ներկայի ձևերը (եզակի և հոգնակի թվի երրորդ դեմքով) արտահայտում են ներկա ժամանակի իմաստային բոլոր դեպքերում, երբ հանդես են գալիս իրողության ճշմարտացիության վկայակոչման գործառնությունը: Այս նպատակից դուրս արդեն նրանց ժամանակային իմաստը պայմանավորվում է նախադասության կառուցվածքով կամ բովանդակությամբ, ինչպես մնացած բայերինը. «Այլ նա, ասեն, ոչ ընդ վերինսն և ոչ ընդ ներքինսն...»⁸: «...գնեաց ցորեան քաղում յոյժ և բաշխեաց ամենայն կարօտելոց, որում և վկայէ Յովսեպոս» (Մհ, 160): «Սա այր աշխատասէր և հայրենասէր եղեալ, որպէս ցուցանէ նոյն պատմագիր» (Մհ, 43):

Նույն նպատակով են կիրառված հետևյալ միջանկյալ նախադասություններում լսել բայի առաջին դեմքի բայաձևերը. «...ի պատահուածս նոյն ամբարտակ գետոյն այժմ, որպէս լսեմք, մարդիկ աշխարհին ի հէն և ի գաղթականս փախստեամբ ամբանան» (Մհ, 52): «Յայտնեն զայս ճշմարտապէս և թուլիւացն երգք, զոր պահեցին ախորժելով, որպէս լսեմ, մարդիկ կողմանն դինեւտ գաւառին Գողթան» (Մհ, 84):

Ներկայական (ներկա) դերբայի իմաստ արտահայտող կառույցներում բայը դրվում է ներկա ժամանակով, որը պայմանավորված է այդ դերբայի ժամանակային իմաստով: Սա պետք է համարել ներկայի կիրառություններից մեկը գրաբարում. «Յայտմ իսկ է բանն ճշմարիտ, զի այլ է որ սեբմանէ, և այլ է որ հննէ...» (Ագ, 361): «Եւ դարձեալ թէ՛ որ խնդրէ, առնու, որ հայցէ, գտանէ, և որ բաշխէ՝ բացցի նմա» (Եփրեմ Ասորի, 16):

Բ. Ներկա ժամանակի բայաձևերը ապառնի ժամանակի իմաստով: Գրաբար, ստորադասական եղանակի⁹ ապառնի ժամանակի համար ունենալով որոշակի բայաձևեր, անցյալ ժամանակի քերականական իմաստի արտահայտման համար առանձին ձևեր չունեն: Այդ պատճառով ստորադասական եղանակի անցյալ ժամանակի իմաստի արտահայտման համար գործածվում էին սահմանական եղանակի անցյալ անկատարի բայաձևերը¹⁰: Սրանց համաբանությամբ սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը նույնպես սկսում են երկրորդաբար կիրառվել ստորադասական եղանակի ապառնի ժամանակի իմաստով:

Քանի որ ստորադասական եղանակը համապատասխանում է ժամանակակից հայերենի ըղձական, պայմանական, հարկադրական եղանակներին, ուստի սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերի երկրորդական կիրառությունները կքննենք ըստ այդմ:

ա) Ներկան իբրև ըղձական ապառնի: Ներկա ժամանակի բայաձևերը ըղձական ապառնու իմաստով կիրառվում են ինչպես պայմանական, այնպես էլ հաստատական խոսքում: Հաստատական խոսքում ներկան ըղձական ապառնու իմաստ է արտահայտում ամբողջ նախադասության բովանդակությամբ

⁷ Ագաթանգեղոս. Պատմութիւն Հայոց. Տիփլիս, 1909, էջ 88 (այսուհետև՝ Ագ):

⁸ Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կէսարոյ Կապաղովկացոյ ճառք վասն Վեցօրեայ արարչութեանն. Վենետիկ, 1830, էջ 26 (այսուհետև՝ Բարսեղ):

⁹ Հեղինակների մի մասը ստորադասական եղանակի համար զանազանում է առաջին և երկրորդ առաւելիներ (Մ. Արեղյան, Հ. Ավետիսյան, Պ. Շարաբխանյան, Ա. Աբրահամյան և այլք), իսկ մյուս մասը երկրորդ ապառնին (գրեցից) համարում է սահմանական եղանակի ժամանակաձև (Գ. Զահուկյան, Վ. Առաքելյան և այլք): Մենք հետևում ենք առաջին տեսակետին:

¹⁰ Մ. Չամչեան. Քերականութիւն հայկազեան լեզուի. Շուշի, 1859, էջ 250: Վ. Չամչիւեան. Քերականութիւն հայկազեան լեզուի. Վիեննա, 1883, էջ 379—380: Ա. Այտրեան. Քննական քերականութիւն աշխարհարար կոմ արդի հայերէն լեզուի. Վիեննա, 1866, էջ 74: Հ. Աճառյան. Կրկատար քերականութիւն հայոց լեզվի. հ. 4, Ա, Նրևան, 1959, էջ 385—386 ևն:

պայմանավորված. «Մինչ դու գնացեր, և զերկիրս ամենայն ընդ քեզ տարար, ևս աւերակացս ո՛ւմ թագաւորեմ» (Մկ, 191—192): «...ասելով՝ թէ ուղտ եմ, ուղտ եմ, և զարքայի զմեզս բառնամ, գիրք ՚ի վերայ իմ զմեզս արքայի, թող բառնամ»¹¹:

Ըղծական ապառնու իմաստը երբեմն կարող է նախանշվել այնպիսի բառերով, ինչպիսիք են երանի, իցիւ, օշ քէ, քող ևն. «Թող գրեմ և ցուցանեմ մեծ թագաւորին, զի ի բաց թողցէ զայսպիսի իրաց առաջարկութիւն...» (Եղիշ, 59):

Սահմանական ներկայի բայաձևերը ըղծական եղանակի ապառնի ժամանակի իմաստ են արտահայտում նաև երկբայական նախադասութեան մեջ, որտեղ սովորաբար կիրառվում են ստորադասական եղանակի բայաձևերը. «...գուցէ թէ մեք ծովանամք»¹²: «Հրաման տացուք ամենայն աշխարհի՝ ընդ քո ի պահս և ի խնդրուածս լինել, և մեք հանդերձ քե յապաշխարութիւն մըտցուք. ո գիտէ, քողոս տէր զքո զայդ զանհնարին զմեզսդ գործեալ» (ՓՔ, 94): («Իսկ քո գործած մեղքերի համար ամբողջ երկրին հրաման կտանք, որ քո փոխարեն պաս պահեն, աղոթք անեն, և մենք էլ քեզ հետ միասին ապաշխարութեան մեջ մտնենք, գուցե տերը ների քո գործած անշափ մեղքերը»)՝¹³: Համեմատելով՝ «...գուցէ և օրինացս մերոց քակտումն ինչ հասանիցէ» (Եղիշ, 181): «...ո գիտէ՝ զկին (ծան. զկնի) նորա հնար լիցի յափշտակել» (ՓՔ, 99):

Ներկա ժամանակի բայաձևերը ըղծական ապառնու իմաստ են արտահայտում նաև նախադասութեան կառուցվածքով պայմանավորված: Այս դեպքում նրանք հանգես են գալիս բարդ ստորադասական նախադասութեան կազմում:

1) Պալմանական խոսքում: Ըղծական ապառնու իմաստով ներկա ժամանակի բայաձևերը հանգես են գալիս այն բարդ ստորադասական նախադասութեան պայմանի պարագա երկրորդական նախադասութեան ստորոգյալի դերում, որի գլխավոր նախադասութեան բայ-ստորոգյալն արտահայտում է ժամանակակից հայերենի պայմանական ապառնու իմաստ՝ արտահայտված լինելով ինչպես ստորադասական եղանակի, այնպես էլ սահմանական ներկայի բայաձևերով. «Զի թէ ԸՄՊէՔ զնս արժանեօք՝ աչքեսցէ զախտ ձեր, և սրբեսցին անձինք ձեր» (Ագ, 271): «Եթէ կամօք ՅԱՆՁՆ ԱՌՆՈՒՔ զօրէնսն, պարգևս և պատիւս գտանէի ի նմանէ, և թողութիւն հարկացն յարքունուստ լիցի քեզ, ապա թէ կամօք զայդ ՉԱՌՆԷՔ, հրաման ունիմք ի գեօղս և ի քաղաքս շինել ատրուշանս» (Եղիշ, 70): «Եթէ կամիս սպանանել զիս, սպան, այլ ես, եթէ ԳԱՅ ինձ ի ձեռն երբէք այդ թագաւոր, որպէս եկն բազում անգամ, ես ոչ սպանանեմ, զայդ թագաւոր՝ որ գամ մի թագ ունի, եթէ ոք իսկ զիս սպանցէ» (ՓՔ, 167):

Նկատենք, որ միևնույն նախադասութեան կազմում ապառնի ժամանակի իմաստով իրար կողք-կողքի հանգես են եկել ստորադասական ապառնու և սահմանական ներկայի բայաձևերը:

Երբեմն գլխավոր նախադասութեան ստորոգյալը կարող է արտահայտված լինել հրամայական եղանակի բայաձևով. «...եթէ զերկինս ԲԱՆԱՅ, մի՛ տառնեւ, եթէ հրեշտակական վարս ՈՒՆԻ, մի՛ հաւատար» (Եզեիկ, 302):

Ներկա ժամանակի բայաձևերն ըղծական ապառնու իմաստով են գործածվում նաև ժամանակի պարագա երկրորդական նախադասութեան կազմում. «Քանզի քո առատ բարեբարութիւնդ յայնժամ երևեսցի, յորժամ ինձ ՈՂՈՐՄԻՍ, որ չեմ արժանի ողորմութեան քում, յորժամ յիս ՅՈՒՅԱՆԵՍ... որ արժանի եմ բիրոց տանջանաց» (Եփրեմ Ասորի, 63): «Իսկ թագաւորն Պապ ասէ ցեպիսկոպոսապետն Ներսէս, թէ մի՛ լինիր դու բարեխօս. զի իբրև ԻԶԱՆԷ, ՚ի

¹¹ Փատոսի Բուզանդացու Պատմութիւն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1863, էջ 228 (այսուհետ՝ ՂՓ):

¹² Ղազարայ Փարպեցու Պատմութիւն Հայոց. Եւ Թուղթ առ Վահան Սամիկոնեան. Տփղիս, 1904, էջ 149 (այսուհետ՝ ՂՓ):

¹³ Փալմաստոս Բուզանդ. Պատմութիւն Հայոց. Երևան, 1968, էջ 163:

գորսն Պարսից անկանի» (ՓԲ, 163): «Ապա թէ 'ի վերայ հայ հողոյն խիստ
ինչ բարբառեսցի, գիտաւջի՛ր՝ զի ուր օր ՀԱՍՍԱՆէ յերկիրն Հայոց, գնոյն ձայն
ածէ ընդ քեզ, և գնոյն պատերազմ նորոգէ ընդ քեզ...» (ՓԲ, 141):

Ժամանակի պարագա երկրորդական նախադասությունների ենթատեքստում արտահայտությամբ է ն պայմանի իմաստ:

2) Հաստատվեցին խոսքում: Սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերն ըղձական ապառնու իմաստ են արտահայտում նաև բարդ ստորադասական նախադասության նկատակի պարագա երկրորդական նախադասության կազմում. «Զամենայն հոգս մարդկան ի բաց ջնջեա՜ ի քէն, զի վասն ողոց ԸնթԱնԱՍ»¹⁴: «Եւ դարձեալ թէ՛ «Ա՛ժ զսուր քո ընդ մէջ քո, հօօր, զի՛ ԿԱՅՅԻԷ ճշմարտութեան թում» (Ազ, 199): «Եւ այժմ բա՛ց ինձ տէր զգուռն ուղորմութեան՝ որ ողբեալ կ'ԱՐԴԱՄ առ քեզ և մի՛ անտես ասներ զաղա՛անս սեղուցեալ անձին իմոյ...» (Եփրեմ Ասորի, 67): «Զսէր և զերկիրդ բնութիւն արա՛ր քեղ, որ խաբէութեամբ ԶԱՇԽԱՏԻՍ» (Եզնիկ, 299):

Որոշ միադիրմի բայերի թելադրանքով ներկա ժամանակի բայաձևերն ար-
տահայտում են ապառնի ժամանակի իմաստ (մասնակցելով համապատաս-
խան եղանակների կազմությանը դրաբարում)։ «Ձի եթէ մի մասն աշխարհիս ա-
պակեանացու է, ևսրկ է քէ և ամենայն մասունքն ընդ նմին ԱղկկԱնիսն» (Շիր-
շէ, 112—113)։

Իբրև ամփոփում պետք է ասել, որ սահմանական ներկա ժամանակի բա-
յաձևերն ըղձական ապառնու իմաստով կիրառվում են՝ պայմանավորված ինչ-
պես նախադասության ընդհանուր բովանդակությամբ, այնպես էլ կառուցված-
քով. նկատի ունենք ինչպես կապակցության որոշակի միջոցների առկալու-
թյունը, այնպես էլ երկրորդական նախադասության որոշակի բնույթը: Օրի-
նակ՝ զի շաղկապի (նպատակի իմաստով), հաճախ նաև քէ, եթէ շաղկապների
հետ զրաբարում սովորաբար կիրառվում են ստորադասական եղանակի բա-
յաձևեր: Պատահակա՞ն է, արդյոք, որ ներկա ժամանակի բայաձևերն ըղձա-
կան ապառնու իմաստ են աբտահայտում ճնշող մեծամասնությամբ յէ,
եթէ-ով սկսվող պայմանի պարագա երկրորդական նախադասության
կազմում: Կամ՝ ներկայի բայաձևերը զի-ով սկսվող նպատակի պարագա երկ-
րորդական նախադասության կազմում միշտ արտահայտում են ըղձական ա-
պառնու իմաստ. «...զՔրիստոսի մասն կարօտեալ եղբօրն տո՛ւր նախ քան
զքօ ճաշակելն, զի Քրիստոս քեղ սեղանակից ի՛նք» (Եղնիկ, 307): Համեմա-
տի՛ր՝ «Զօրացի՛ր անբարանօքն Քրիստոսի, և համբերեա՛ վասն նորա, զի
վԱՅՅԵՆՅՅԵՄ յանաբց բարութիւնսն» (Եզնիկ, 300):

Պետք է շեշտել մի կարևոր հանգամանք: Ներկա ժամանակի բալաձներն աներկբայորեն ապառնի (ըղձական, սլալմանական, հարկադրական) ժամանակի իմաստ են արտահայտում այն դեպքում, երբ տվյալ կառուցում կա ապառնիովյան իմաստ թեղադրող՝ ստորադասական ապառնիով զրված բալաձն: Համեմատի՜ր՝ «Այլ վասն իմ ոք կոծ մի՛ դիցէ. եթէ Դնէ ոք, նա լիցի դատապարտ...» (ՓԲ, 218): «Եւ եթէ ստամբակեալ ոք ընդդէմ դարձցի, ինքն մահու պատուհաս Ընդո՞նի, և՛ կին, և՛ որդիք այնպիսոյն անաշխարհիկ եղեալ՝ յարքունիս թթիցեն» (Նղիշէ, 71): «Մարդասէր է Տէր, երկայնամիտ և բազումողորմ է. գթած առ մահեսեան, որ ԿԱՐԴԱՆ առ նա, և որ խՆԴՈՒՆԻ ի նմանէ՛ ԹՈՂՈՒ Նոցա» (Ագ, 125): «...ասէ. «Որ զձեզ Ընդո՞նի՛ զիս Ընդո՞նի, և որ զիսն Ընդո՞նի՛ Ընդո՞նի զՀայրն իմ» (Ագ, 289):

Եթե առաջին երկու նախադասության ներկայի բայաձևերն աներկբայորեն ապառնու իմաստ են արտահայտում, ապա մյուս նախադասությունների ներկա ժամանակի բայաձևերի մասին նույնը ասել չենք կարող: Ա. Տեր-Ղեւզումբյանը թարգմանել է «...գթացող է նրանց նկատմամբ, որոնք ԿԴԻՄԵՆ՝

14 Երանելւոյն Կիրեւի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան. Վիեննա, 1632,
էջ 5 (ալսուհեակ՝ Կիրեւի):

նրան, և եթէ իրենից հնդերեն, Կնեթի նրանց»¹⁵։ «...Ուլ որ ձեզ Ընդոնի, ինձ Կնեթոնի, և ուլ որ ինձ Կնեթոնի, Կնեթոնի իմ Հորը»¹⁶։

Կարելի է թարգմանել և այսպես. «...գթացող է նրանց նկատմամբ, որոնք ԴիՄՈՒՄ են նրան, եթե իրենից հնդերեն չեն, Ներոնի է նրանց»։ Կամ՝ «Ուլ որ Ընդոնի չէ՞, Ընդոնի չէ՞ (նաև) ինձ, և ուլ ինձ է Ընդոնի չէ՞, Ընդոնի չէ՞ և՛ իմ Հորը»։

Այսպիսի կառույցներում (երբ չկա ապառնիություն իմաստը թելադրող որևէ միջոց) ներկա ժամանակի բայաձևերի գլխավոր թև երկրորդական ժամանակային իմաստով գործածված լինելը ստույգ որոշելը դժվարություն է հարուցում։ Դրանց մեծ մասում նրանք արտահայտում են և՛ ներկայի, և՛ ապառնու իմաստ։ Նրանցից մեկի կամ մյուսի ընտրությունը թարգմանություն ժամանակ սուբյեկտիվ ընկալման հարց է։ Պատահական չէ, որ նման կառույցներում ներկայի բայաձևերն ունեն ընդհանրական ներկայի իմաստ (երբ գործողությունը վերաբերում է նաև ապագային)։ «Աստուածասէրն յիւր կասացն որպէս ի թշնամույ ԶԳՈՒՇԱՆԱՅ» (Եզնիկ, 299)։ (Աստվածասէրը իր ցանկություններից ԶԳՈՒՇԱՆՈՒՄ է (ՊԻՏԻ ԶԳՈՒՇԱՆԱ), ինչպես թշնամուց)։

Ինչպես տեսնում ենք, նման դեպքերում ներկայի բայաձևի՝ ապառնի ժամանակի իմաստով թարգմանությունը ղեկավարում է խոսողի վերաբերմունքը գործողության նկատմամբ. «եթէ ԱՌՆԵՆ քեզ ԶՍԷՐ (սիրում, սիրում են), դո՛հացի՛ր զԱստուծոյ. և եթէ ՈԶ ԱՌՆԵՆ (չսիրեն, չեն սիրում), մի՛ տըրտընցեր և մի՛ տրտմեցուցտնեք զանձն ուրուք. այլ նեղեա՛ զքեզ սակաւ մի լրուութեամբ, զի որ պատերազմի, ժուժկալութեան պէտք են (Եզնիկ, 308)։ «Որ ՀԱՆԱՍԱՅ (հավատա, հավատում է) յՈրդի՝ ՈՒՆԻ (կունենա, ունի) զԿեանսն յաւիտենականս, որ ԹԵՐԱՀԱՆԱՍԷ (չհավատա, չի հավատում) յՈրդույ՝ ՈԶ ՏԵՍԱՆԷ (չի տեսնի, չի տեսնում) զԿեանսն յաւիտենից» (Ագ, 220)։

բ) Ներկան իբրև պայմանական սպառնի։ Ժամանակակից հայերենում պայմանական եղանակի բայաձևերն արտահայտում են ոչ միայն պայմանով, ևնթադրաբար, այլև հաստատապես կատարելի գործողության իմաստ։

Գրաբարում ևս ներկայի բայաձևերը պայմանական եղանակի ապառնի ժամանակի իմաստով գործածվել են ինչպես պայմանական, այնպես էլ հաստատական խոսքում։

1) Պայմանական խոսքում։ Սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը պայմանով, ենթադրաբար կատարելի գործողության իմաստ են արտահայտում որոշակի կառույցներում։ Նրանք հանդես են գալիս պայմանի պարագա երկրորդական նախադասություն ունեցող բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասության բայ-ստորոգյալների գերում. «Եւ զհագար՝ եթէ ի տօթ ժամանակի ուտիցէ որ, քանզի զովացուցիչ է, զտապս ի փորոյն ՓԱՐԱՍԷ, և երէ ի հով ժամանակի ուտիցէ որ, ՎՆԱՍԷ, և եթէ զչորն քամեալ անապակ ըմպիցէ որ, ՍԱՏԱԿԻ. և եթէ զսերմն աղացեալ՝ ջրով ըմպիցէ որ, ի ցանկութենէ ԱՐԿԱՆԷ» (Եզնիկ, 66—67)։ «Եւ երէ լսէ որ դոցա և ի կանաչս ոչ մերձենան, աշխարհի վախճան վաղվադակի ՀԱՍԱՆԷ» (Եղիշէ, 27)։ «Եւ ոմն մերկանայ զհանդերձս ընկերին, և քէ ընդդէմ դառնայցէ յարեւէ եւս ԱՐԿԱՆԷ» (Եզնիկ, 19)։ «Յարիցես գնասցես ՚ի բաց զի մեռանիմ խորովիմ, ԿԻՄԿԻՄ, ՊԱՅԹԻՄ, քէ ոչ յարիցես գնասցես ՚ի տանէ» (ՓԲ, 132)։

Վերջին նախադասության ընդգծված բայաձևերն ապառնու իմաստ են արտահայտում նախադասության երկրորդ մասի կառուցվածքի պատճառով, անդեպքում, երբ նույն նախադասության առաջին երկու բայաձևերը կիրառված են հենց ներկայի իմաստով։

Ինչպես երևում է վերոհիշյալ նախադասություններից, այս դեպքում երկրորդական նախադասությունների բայ-ստորոգյալներն ունեն ըզձական ա-

¹⁵ Ագաթանգեղոս. Պատմություն հայոց. Երևան, 1983, էջ 135։

¹⁶ Նույն տեղում, էջ 319։

պառնու իմաստ՝ արտահայտված լինելով ինչպես ստորագասական ապառնու, այնպես էլ սահմանական ներկայի բայաձևերով:

Հարկ է նշել, որ սահմանական ներկայի բայաձևերը ապառնու իմաստ են արտահայտում գլխավորապես այս կառույցներում:

Պայմանական ապառնու իմաստով ներկայի բայաձևերը հանդես են գալիս նաև ժամանակի պարագա երկրորդական նախադասությունն ունեցող բարդ ստորադասական նախադասության գլխավոր նախադասության ստորոգյալների դերում. «...քանզի մեք յորժամ բռնութեամբ կռուեսցուք ընդ աշխարհիս, աշխարհս ի ԲԱՑ ՔԱՆԴԻ, և մեք ի պատուհասէ ԶԱՊՐԻՄՔ» (Եղիշէ, 63): «Գիտէք, սիրելիք, զի յորժամ ծովացեալ մօտացեալ կայցեն բազում ջուրք յանդաստանս, խափանիչ լինին բուսոյ ծննդեան երկրի» (Բարսեղ, 29): «...թէ յորում ատուր ուտես ի պտղոյ ծառոյն, ի նմին ատուր ՄԵՌԱՆԻՍ, և թըշնամին յետոյ եկեալ ասէ՛ք՝ ՈՉ ՄԵՌԱՆԻՍ, այլ իբրև զաստուածս լինի՛ս» (Եղիշէ, 74):

Ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում առկա է նաև պայմանի իմաստ:

Ի դեպ, ավելի շատ հանդիպում ենք յորժամ շաղկապով կառույցների: Կապակցության մյուս ձևերով կազմությունները, որոնցում ներկան արտահայտեր ապառնու իմաստ, ավելի քիչ են հանդիպում:

Սահմանական ներկայի բայաձևերը պայմանական ապառնու իմաստ են արտահայտում պայմանահետևանքային իմաստ արտահայտող այն բարդ համադասական նախադասություններում, որոնց մեջ պայմանի իմաստ արտահայտող նախադասության ստորոգյալն արտահայտված է հրամայական եղանակի բայաձևով. «Դու սիրեա՛ ամենեցուն, և հրամայեա՛ քո ԿԱՌԱՎԱՐԻՆ առնեալն արարածք» (Եփրեմ Ասորի, 89): «Ընդէ՞ր, արքայ, ցայդ վայր միայն ետուր ընթեռնու. այլ յառաջ ևս մատո՛ զկարդացումն, և ԼՍԵՍ անդ զյարուրիւնն, զյայտնութիւնն առ բազումս...» (Եղիշէ, 13): «Նահանջեա՛ զտրտմօղ բարս՛ շորակերութեամբ, և զխստութիւն սրտիդ կակղեա՛ տքնութեամբ, և զգիւնութիւն մարմնոյդ ցամաքեցո՛ աշխատութեամբ, և ԿԱՐԵՍ բառեալ զխաշն Բրիստոսի» (Եղիշէ, 306)¹⁷:

2) Հաստատական խոսքում: Եթե սահմանական ներկայի բայաձևերը պայմանով կամ ենթադրաբար կատարելի գործողության իմաստ են արտահայտում միայն շարահյուսական որոշակի կառույցներում՝ դրանցով պայմանավորված, ապա նրանք հաստատապես կատարելի գործողության իմաստ են արտահայտում՝ նախադասության բովանդակությամբ պայմանավորված: Այս դեպքում արտահայտվում է՝ ա) խոսողի կարծիքով, նրա հիմնավորմամբ հաստատապես կատարելի գործողություն՝ «Ե՛լ համարձակ ընդ առաջ նորա, և մի՛ զանգիտեր ամենեկն տալ պատերազմ. գիտեմ զի ի պարտութիւն մատնին առաջի բոյոյ մեծի գորութեանդ» (Եղիշէ, 75):

բ) խոսողի որոշումը, վճիռը, խոստումը՝ «Ես եմ, ես եմ, ես եմ, ես եմ ի սկզբանէ մինչև յաւիտեան. ոչ տամ զփառս իմ այլում, և ոչ զքաջութիւնս իմ դիօշելոց» (Եղիշէ, 109): «Այլ զանցս իրացն պատմեմ, որ ի նմանէ ընդ սուրբ եկեղեցիսն էանց, և ոչ դանդաղիմ. ոչ բամբասասէր մտօք, այլ ճշմարտութեամբ զեյս իրացն ասելով ոչ լռեցից» (Եղիշէ, 15): «... և անդէն ի գեղեզմանի զհատուցումն քեզ, ուր են իսկ առաջինքն, որ մեռանն. վաղվաղակի յլեմ զքեզ՝ ուր կամիսն երթալ» (Ագ, 35):

Ինչպես տեսնում ենք, բոլոր կիրառություններում արտահայտված է խոսողի համոզվածությունը կատարելի գործողության նկատմամբ: Երբեմն խոսողի համոզվածությունը կարող է ընդգծվել որոշակի բառերով, օրինակ՝ «... և քաղեալքն պնդեալ էին՝ թէ մեռանի թագաւորն, և նա ոչ մեռաւ» (Եղիշէ, 156):

Ներկա ժամանակի բայաձևերի՝ ստորագասական ապառնու իմաստով կիր-

17 Համեմատել՝ ժամանակակից հայերենի հետ. Գ. Գ ա Ր Ե գ ի ն յ ա ն. Ժամանակակից հայոց լեզու. Երևան, 1984, էջ 45—46:

բառություն համար չափազանց կարևոր է կատարելի գործողության նկատմամբ խոսողի որպիսի վերաբերմունքի արտահայտված լինելու հանգամանքը: Խոսողի վերաբերմունքը կարող է արտահայտվել իբրև իդեա (ըզձական), իբրև համոզմունք կամ ենթադրություն (պայմանական), իբրև անհրաժեշտություն (հարկադրական): Գրաբարում այս իմաստներն արտահայտվել են միևնույն բայաձևերի միջոցով: Ահա՝ թե ինչու հաճախ դժվար է լինում որոշել, թե տրվել բայաձևի մեջ վերոհիշյալ իմաստներից որն է նախընտրելին: Այս դժվարությունն առանձնապես վերաբերում է ներկա ժամանակի բայաձևերի երկրորդական կիրառություններին: Դժվար է լինում որոշել՝

1) թե տվյալ բայաձևը ստորադասական ապառնու իմաստ է արտահայտում, թե՞ սահմանական ապառնու: Այսպես՝ «...թէ զհօրն խորհուրդ ծանեա Որմիդդ, զեղբօրն շարաճճոյ զխորհուրդ ընդէ՞ր ոչ գիտաց՝ թէ ծալի՞լ գորովայնն և ելանէ, և յառաջ երբայ առնու զթագաւորութիւնն, որ լինելոց էր առ եղեռանէ նմա...» (Եզնիկ, 126—126): Այս նախադասության մեջ աներկբա է ընդգծված բայաձևերի սահմանական ապառնու իմաստով գործածված լինելը, որովհետև նրանք արտահայտում են օբյեկտիվորեն կատարելի գործողության իմաստ: Բայց հետևյալ կիրառությունների մասին նույնը ասել չենք կարող. «Եւ ի գառանցն լինելոց են գայլք, որ կոտորելոց են զսուրբ գառինս. այս ինքն որ գնան ի ճշմարտութենէ անտի և յուխտէ քահանայիցն՝ լինելոց են գայլք, և Խանն ճապաղիս արեան գառանցն, այս ինքն ուխտին և քահանայութեանն, և խոռովութիւն ժողովրդոցն: Իսկ որ համբերենն միամտութեամբ ի գառանցն, ի ժողովրդոցն կամ ի քահանայիցն՝ թիս սոռնուցուն և յարքայութիւնն Քրիստոսի վերանան: Իսկ որ զմիտս գայլոցն կամ զգործս յափշտակութեան նոցա ունիցին՝ ի հոտն անշէջ մատնեսցին» (Ագ, 391): Եթե գնան և հանեն բայաձևերի՝ սահմանական ապառնու իմաստով կիրառությունն աներկբա է, ապա նախադասությունն նախադասության ներկայի բայաձևերի մասին նույնը ասել չենք կարող, հետևյալ պատճառով՝ այդ նախադասությունը կարող ենք դիտել կամ պայմանական կառուցվածք՝ «...ովքեր համբերեն... թեք կառնեն, կվերանան...», կամ նկարագրական կառուցվածք (իբրև շարունակություն վերին նախադասությունների) առանց խոսողի համոզվածության ընդգծման՝ «...իսկ նրանք, որ կհամբերեն... թեք են առնելու և վերահալու...» (այսպես է և թարգմանությունը՝ էջ 425): Ուրեմն, ներկա ժամանակի բայաձևերը կարող ենք գործածված համարել ինչպես պայմանական ապառնու, այնպես էլ սահմանական ապառնու իմաստով և հաճախ դժվար է գտնել, թե դրանցից որն է նախընտրելին:

Նկատենք նաև, որ ապառնի ժամանակի քերականական իմաստն արտահայտող քերականական հիմնական և երկրորդական ձևերը հանդես էին գալիս միևնույն կառուցվածքում՝ դեմ առ դեմ, որի լավագույն օրինակն է վերոբերյալը:

2) Արդյոք տվյալ բայաձևը պայմանական, թե՞ հարկադրական ապառնու իմաստով է կիրառված: «Որպէս և ածէ իսկ զնովիմբ՝ թէ փող հարկանի, և մեռեալք՝ որ ի Քրիստոս՝ յառնեն անապականացուք, և մեք նորոգիմք» (Եզնիկ, 295): Համեմատենք արևմտահայ և արևելահայ թարգմանությունները՝ «...Փող պիտի փշլի, և մեռածները, որ քրիստոնյա էին, պիտի հարություն առնեն որպէս անապատականներ, և մենք պիտի նորոգվենք»¹⁸: «...թե փող կը հնչէ եւ ի Քրիստոս մեռողներ յարութիւն կ'առնեն իբրև անապականացուներ, եւ մեք կը նորոգուինք»¹⁹:

3) կամ՝ սահմանական ապառնու, թե՞ հարկադրական ապառնու իմաստ է արտահայտում: «Եւ ասէ Տէր ցՍամուէլ. Մինչև յերբ սուգ առնուս (պիտի սգաս կամ ես սգալու) ի վերայ Սաուղայ...»²⁰:

¹⁸ Եզնիկ Կողբացի. Աղանդների հերթումը. Երևան, 1970, էջ 180:

¹⁹ Եզնիկ Կողբացի. Եղծ աղանդոց. Պուհնոս Այրես, 1951, էջ 147:

²⁰ Աստուածաշունչ մատենան հին և նոր կտակարանաց. Վիեննա, 1929. Թագաւորութեանց առաջին, գլ. ԺԶ, էջ 310 (այսուհետև Աստուածաշունչ, համապատասխան գլուխը և էջը):

4) կամ՝ սահմանակա՞ն ապառնու, թե՞ ըղձական ապառնու իմաստով՝ ներկայի բայաձևերի գործածված լինելը: «...գսոյն հաւատամք Աստուած ճըշմարիտ, և նմին ակն ունիմք, որ փառօք Հօր և զօրութեամբ զալ՝ յարուցանել զամենայն ննջեցեալս...»: Համեմատիր՝ «...և նրան ենք սպասում, որ Հոր փառքով ու զորութեամբ զալու է հարութիւն տալու...» (Եղիշէ, 87):

«...ու կ'սպասենք անոր որ վերստին զայ իր Հոր փառքովն...»²¹: Նույնն է 1911 թ. թարգմանության մեջ²². առաջին դեպքում շեշտվում է անուղղակի խնդիրը, երկրորդ դեպքում՝ նպատակը: Երկրորդական նախադասության բընույթն էլ թելադրում է համապատասխան եղանակաժամանակային իմաստը:

Երբ տվյալ գործողությունը դիտվում է իբրև խոսողի համոզվածություն, այսօր այն ընկալվում է պայմանական ապառնու իմաստով, երբ այդ համոզվածությամբ՝ կատարելի գործողության անվերապահությունը շեշտվում է այնքան, որ բարձրանում է անհրաժեշտության աստիճանի, այսօր այն ընկալվում է հարկադրական ապառնու իմաստով, իսկ երբ կատարելի գործողությունը ներկայացվում է խոսողի շեղոք վերաբերմունքով, այն ընկալվում է իբրև սահմանական ապառնու: Դրանցից մեկի կամ մյուսի ընտրությունն արդեն սուբյեկտիվ ընկալման հարց է: Օբյեկտիվ հիմք կարող է հանդիսանալ ստեղծագործության, պարբերության կամ նախադասության բովանդակությունը, օգնող պորժոն կարող է լինել հեղինակի ոճը, բայց որոշիչ դերը մնում է սուբյեկտիվ ընկալմանը: Մեզ համար էական է այն, որ նրանց միջև ժամանակային տարբերություն չկա, և մենք գործ ունենք սահմանական ներկա ժամանակի բայաձևերի՝ ապառնի ժամանակի իմաստով երկրորդական կիրառության հետ:

Այսպիսով, սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը ապառնու իմաստով են կիրառվել՝

- 1) նախադասության կառուցվածքով պայմանավորված,
- 2) նախադասության բովանդակությամբ պայմանավորված:

Բնականաբար նախադասության կառուցվածքով պայմանավորված կիրառություններում նրանց արտահայտած եղանակաժամանակային իմաստը (ստորադասական՝ ըղձական, պայմանական, հարկադրական և սահմանական ապառնի) աներկբա է, իսկ նախադասության բովանդակությամբ պայմանավորված կիրառություններում նրանց եղանակային իմաստի ընկալումն արդեն սուբյեկտիվ երևույթ է: Նրանց արտահայտած եղանակների հարցի քննությունը մեր նպատակից դուրս է. այն մեզ հետաքրքրում էր այնքանով, որքանով՝ անհրաժեշտ էր ցույց տալ ներկա ժամանակի բայաձևերի՝ ապառնի ժամանակի իմաստով բոլոր հնարավոր կիրառությունները: Այդ կիրառությունների քննությունը ցույց է տալիս, որ V դարում արդեն ներկա ժամանակի բայաձևերն ապառնու իմաստով այնքան շատ էին գործածվում, որ հնարավորություն են տալիս գտնելու այդ կիրառություններն ապահովող կառուցվածքային օրինաչափություններ: Այս իմաստով պետք է համաձայնել Լ. Հովհաննիսյանի այն մտքին, թե «արդեն դասական շրջանում խախտված էին առաջին ապառնու և սահմանական եղանակի ներկայի կիրառության սահմանները»²³: Այդ են վերկայում միևնույն կառուցվածքում ստորադասական ապառնու (առաջին և երկրորդ) և սահմանական ներկայի բայաձևերի կիրառությունները միևնույն ժամանակային իմաստով: Օրինակ՝ «Հնազանդեա՛ սիրով... և պայծառասցի՛ս յերկնային հարսանիսն» (Եղնիկ, 300): «Սկսի՛ր յառաջնմէն... գտանես զոր ինչ երանելին...» (Եղնիկ, 262):

Այդ են վկայում նաև միևնույն նախադասության մեջ այդ բայաձևերի՝ միասին կիրառությունները քերականական միևնույն ժամանակի արտահայտման համար, որը երևում էր մեր վկայակոչած օրինակների մեծ մասում:

²¹ Եղիշէ. Վարդանանց պատմությունը. Նյու Յորք, 1952, էջ 100:

²² Եղիշէի Վարդանանց պատմությունը. Կ. Պոլիս, 1911, էջ 85:

²³ Լ. Հովհաննիսյան. Դասական գրաբարի բայական ժամանակների կիրառությունը. Լեզվի և ոճի հարցեր, հ. III, Երևան, 1975, էջ 311:

Գ. Ներկա ժամանակի բայաձևերն անցյալ ժամանակի իմաստով: Ներկա ժամանակի բայաձևերն անցյալ ժամանակի իմաստով գործածվում են անցյալ ժամանակներում կատարված իրողությունները ներկայացնելիս, որոնց մասին խոսողը պատմում է ներկայում, տվյալ պահին: Սա ներկա ժամանակի բայաձևերի տարածված կիրառություն է տարբեր լեզուների համար և կոչվում է պատմական ներկա:

Պատմական ներկան որոշակի ոճական միջոց է, որը խոսքը դարձնում է ավելի հավաստի, քանզի խոսողը այն ներկայացնում է իբրև տվյալ պահին կատարվող: Այս իմաստի արտահայտման համար անհրաժեշտ է շարահյուսական որոշակի միջավայր: Ներկայի բայաձևին նախորդում է անցյալը նախանշող որևէ բառ կամ բառակապակցություն, անցյալով դրված որևէ բայաձև, որոնք և իրենց ժամանակային իմաստն են թելադրում ներկա ժամանակի բայաձևերին: «Առն, դուր ի նախակարգ բանիս նշանակեմք, վասն որոյ և փոյթ արարեալ մեր պատմելոյ, էր Մաշթոց անուն...»²⁴:

Գրաբարում անցյալի գործողություններն արտահայտվում էին անցյալ անկատար և անցյալ կատարյալ համադրական կառուցվածքների և գերակատար (վաղակատար-հարակատար) բաղադրյալ կառուցվածքի միջոցով:

ա) Ներկան անցյալ կատարյալի իմաստով: Այս կիրառության ժամանակ պարբերությունում (կամ հենց տվյալ նախադասության մեջ) ներկայի բայաձևին նախորդում է անցյալ անկատարով կամ անցյալ կատարյալով դրված բայաձև. «Արդ՝ իբրև անցանէր առ ծովեզերքն՝ տեսանէ զՊետրոս... և կոչեաց ի ձկնորսութենէ անտի» (Ագ, 448): Այս կիրառությամբ ավելի հաճախ հանդես է գալիս ասել բայը. ցանկացած նախադասության մեջ այն ավելի հաճախ արտահայտում է անցյալ ժամանակի իմաստ, բայց դրվում է ներկա ժամանակի բայաձևով: Ինչպես նշեցինք, ներկայի բայաձևերի կիրառությունն անցյալ ժամանակի իմաստով ունի ոճական նշանակություն: Սա վերաբերում է նաև ասել բային: Նման կիրառության համար ոչ պակաս նշանակություն ունի ասել բայի բայիմաստը: Գրաբարյան մտածողությամբ (որոշ դեպքերում և ժամանակակից մտածողությամբ) ասացական և նկարագրական բայերի (աւեմ, կոչեմ, ցուցանեմ, տեսանեմ ևն) ներկայով գործածելը անցյալի ժամանակային իմաստ արտահայտող նախադասության մեջ (նույնիսկ այդ իմաստը լիակատար բայերի առկայությամբ) ունի խիստ ոճական նշանակություն վերոհիշյալ իմաստով. «Եւ նայեցայ և տեսանեմ...» (Ագ, 384) («...նայեցի և տեսա...», էջ 417. «...նայեցի և տեսնում եմ...» — Ա. Յ.): «Եւ կոչեաց Տէր Աստուած զԱղամ, և ասէ ցնա, ո՛ր ես» (Աստուածաշունչ, Ծնունդը, Ե, 3):

Բայիմաստով պայմանավորված՝ խոսքը շոշափելի և արդիական դարձնելու նպատակով պետք է բացատրել այդ բայի համարյա միշտ ներկա ժամանակի բայաձևով դրվելը գրաբարում:

Եթե ժամանակակից հայերենում պատմական ժամանակն արտահայտվում է կամ անցյալ, կամ ներկայի բայաձևերով (ժամանակների համաձայնության պահանջով), ապա գրաբարում այն արտահայտվում էր և՛ ներկայի, և՛ անցյալի բայաձևերով: Անցյալ ժամանակում կատարվող գործողությունները հեղինակը միևնույն պարբերությունում (հաճախ հենց միևնույն նախադասության մեջ) կարող է ներկայացնել մե՛րթ ներկա, մե՛րթ էլ անցյալ ժամանակի բայաձևերով: Ս. Գրաբամաճյանի կարծիքով «բայից ժամանակներիս խառն գործածութիւնն աւելի գեղեցիկ եւ վայելուչ կ'ընէ ոճը»²⁵: «...յոր հոգմ ահագին իմն և աստուածային շնչեցեալ ի գիցն ցասմանէ, Յրէ՛ զամբարտակն, և մարդկանն անլուր բարբառս իւրաքանչիւր ումեք բաշխեալ, աղմուկ շփոթի ի մէջ առկանէին» (Մհ, 32):

Պատմական (պատումի) ժամանակը ցույց է տալիս արդեն կատարված գործողություններ, այսինքն՝ բովանդակում է անցյալի ժամանակային իմաստ,

²⁴ Կոռիւն. Վարք Մաշտոցի. Երևան, 1941, էջ 36:

²⁵ Ս. Գրաբամաճյան. Նոր քերականութիւն հայերէն գրաբար լեզուի. Կ. Պոլիս, 1897, էջ 299:

որը կարող է արտահայտվել անցյալ կատարյալի և անցյալ անկատարի բայաձևերով (վերջիններով ավելի քիչ)՝ իբրև նրանց գլխավոր ժամանակային իմաստ և ներկա ժամանակի բայաձևերով՝ իբրև նրանց երկրորդական ժամանակային իմաստ։ Ուստի, անցյալ անկատարի՝ ներկայի իմաստով կիրառությունը վերաբերյալ հետևյալ ձևակերպումը սխալ է. «Սահմանական եղանակի անցյալ անկատարը երբեմն գործածվում է իբրև սահմանական ներկա կամ անցյալ կատարյալ, օրինակ՝ իբրև զայն լսէր (լսեց կամ լսում է) Պարթևն, զերդումն ուխտին յիշէր (հիշեց կամ հիշում է), որ ընդ Պարսից արքային ուխտեալ էր»²⁶։

Այստեղ կա ձևի և իմաստի շփոթ, հետևյալ իմաստով. անցյալ անկատարը ներկա ժամանակի իմաստով կիրառվել կարող էր միայն այն դեպքում, երբ արտահայտեր ներկա ժամանակի անփոփոխական իմաստը (այս կամ այն փոփոխակի դրսևորմամբ)։ Բերված օրինակներում անցյալ անկատարի բայաձևերը ցույց են տալիս անցյալում կատարված գործողություններ։ Նրանք անցյալ կատարյալի իմաստով կիրառություններ են և ոչ թե ներկայի։ Ուստի երբ պատմում կատարվում է ներկայի բայաձևերով (որն ավելի շատ հատուկ է ժամանակակից մտածողությանը), անցյալ անկատարի և անցյալ կատարյալի բայաձևերը կարող են թարգմանվել ներկայի բայաձևերով և ընդամենը՝ չփոխելով անցյալի քերականական իմաստը։

Բ) Սահմանական նշանակատար ժամանակի իմաստով։ Գերակատար (վաղակատար-հարակատար) ժամանակը անցյալ կատարյալի և անցյալ անկատարի հետ կազմում է բացարձակ-հարաբերական ժամանակային հակադրություն. «...կարդացեալ տեղակասցի զվարս կենաց նորա և գիր հայերէն նշանագրացն, թէ ե՛րբ կամ ո՛ր կամ յո՛ր ուրուք ձեռն գտանէ, թագաւորին Հայոց Վառճապ-հոյ ջերմեռանդն խնդրելով...» (ՂՓ, 13)²⁷։ (...թե որեւէ մեկը ցանկանա այս մասին ավելի հավաստի իմանալ, այսինքն՝ նրա կենսագրության, իր հայերեն նշանագրերի մասին, թե ե՛րբ կամ ո՛ր և կամ ո՛ւմ ձեռքով են ստեղծվել...», էջ 31)։

Ներկայի բայաձևերն այս իմաստով գործածվել են բացառիկ դեպքերում։

Այսպիսով, սահմանական ներկա ժամանակի բայաձևերն անցյալ ժամանակի իմաստով կիրառվել են իբրև պատմական ժամանակի արտահայտիչներ, որի համար գրաբարը գործածում էր անցյալ կատարյալի բայաձևերն իբրև հիմնական միջոց, անցյալ անկատարի բայաձևերը՝ ավելի շատ կատարյալի իմաստով և սահմանական ներկայի բայաձևերը՝ նրանց հետ խառը, հաճախ հենց միևնույն նախադասության մեջ։

Դ. Սահմանական ներկան հրամայական եղանակի իմաստով։ Գրաբարի բերականություններում այս կիրառության կապակցությամբ նշվում է, որ ներկան ստորադասական երկրորդ ապառնու կիրառությամբ երբեմն կիրառվում է հրամայական իմաստով։ «Նմանապէս սահմ. ներկայն իբրև ապառնի կամ ստորադասական վարի երբեմն հրամայական կամ արգելական»²⁸։ Ա. Բագրատունին հիմնականում բերում է արգելական հրամայականի իմաստով ներկայի բայաձևերի կիրառություններ։ Չալրխյանն իրավացի դիտողություն է անում այն մասին, որ դրանք շատ հազվագյուտ կիրառություններ են, և դրանք չպետք է շփոթել ստորադասական ապառնու իմաստով ներկայի բայաձևերի կիրառությունների հետ՝ «Ասէ Կայէն ցձաբէլ. եկ երքամբ շրջիմք...»²⁹ ևն։

V դարի մատենագիրների երկերում հանդիպում ենք այս կիրառությանը։

26 Ա. Ղազարյան. Գրաբարի դասագիրք. Երևան, 1951, էջ 68։ Վ. Չալրխյանն էլ նշում է կատարյալի՝ ներկայի իմաստով կիրառության մասին, որը նույնպես ճիշտ չէ (տե՛ս նշվ. աշխ., էջ 367)։

27 1982 թ. հրատարակությամբ (Ղազար ֆարպեցի. Հայոց պատմություն, Թուղթ վաճան Մամիկոնյանին)՝ էջ 30։ Բարգմանությունը բերված է ըստ այդ հրատարակության։

28 Ա. Բագրատունի. Հայերեն քերականությունի ի պլոս զարգացելոց. Վենետիկ, 1852, էջ 192։

29 Վ. Չալրխյան. նշվ. աշխ., էջ 370։

բացառիկ օրինակներին. «Զղջալից սրտիւ քո սրբեա՛ղ զանդամդ, զի բազմագոյն շնորհս ընդունել մարթասցես, զի թողութիւն մեղաց առ հասարակ շնորհի ա- մենեցուն...: Եթէ սակաւ վաստակես, սակաւ ինչ ընդունիս. եթէ բազում գոր- ծես, բազում վարձ և ընկալցիս: Անձին քում ընթանաս (ընթացիր), զօգուտն և գլան խորհեսի՛ր» (Կյուրեղ, 6): «Յուշ լիցի՛ քեզ, որդեա՛կ, հոգեխառն սնուն- դըն, որով զքեզ սնուցի: Յուշ լինի՛ քեզ աստուածեղէն խրատն, որով զքեզ պա- րարեցի: Յուշ լիցին հալածանքն իմ և քո և ի միասին...» (Ագ, 101):

Ներկայի բայաձևը՝ յուշ լինի ստորագրասական ապառնու բայաձևերի նը- մանությամբ, նրանց շրջապատում գործածված է հրամայականի իմաստով: Նշենք, որ «յուշ լիցի՛ քեզ» կապակցությունը որոշակի ոճ է՝ բնորոշ գրաբար- յան լեզվամտածողությանը՝ «թող քեզ հուշ լինի» բառացի նշանակությամբ, որ ժամանակակից մտածողությամբ արտահայտվում է հրամայական եղանակի բայաձևով՝ նիշի՛ր:

Այսպիսով, սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերը բազ- միմաստ են: Նրանց անփոփոխական իմաստն ունի փոփոխական զանա- զան դրսևորումներ (ամենաընդհանուր ձևով՝ կոնկրետ և ընդհանրական ներ- կա), որոնց լավագույն օրինակներ են տալիս V դարի հեղինակները՝ և՛ պատ- միչները, և՛ թարգմանիչները:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում այդ բայաձևերի երկրորդական կիրառությունները: Նրանք երկրորդաբար գործածվում են. 1) անցյալ ժամա- նակի իմաստով՝ իբրև պատմական ժամանակի արտահայտիչ՝ անցյալ անկա- տարի և անցյալ կատարյալի բայաձևերին զուգընթաց, 2) ապառնի ժամանա- կի իմաստով՝ հանդես գալով ինչպես ստորագրասական ապառնու (ժամանա- կակից հայերենի ըղձական, պայմանական, հարկադրական ապառնիներին համապատասխան), այնպես էլ սահմանական ապառնու իմաստով, երբեմն նաև հրամայական եղանակի իմաստով:

Ներկա ժամանակի բայաձևերն ապառնու իմաստով գործածվում են՝ պայ- մանավորված՝

ա) ն ա խ ա դ ա ս ու թ յ ա ն ը ն դ հ ա ն ու ը բ ո վ ա ն դ ա կ ու թ յ ա մ բ, բ) ն ա խ ա դ ա ս ու թ յ ա ն կ ա ո ու ց վ ա ծ ք ո վ (նախադասության արողակի կաղապար, որոշակի շաղկապների և հարաբերական բառերի առկա- յություն, ժամանակային որոշակի իմաստ թելադրող բառերի առկայություն): Այս կիրառությունները հիմնականում պայմանավորված են շարահյու- սական որոշակի միջավայրով, որի վառ ապացույցն է այն կառուցվածքների քննությունը, որ կատարվեց շարադրանքի ընթացքում: Սա մի պրոցես³⁰ էր, որ պետք է հանգեցներ ներկայի բայաձևի մեջ ստորագրասական ապառնի ժա- մանակի իմաստի ամրապնդմանն իբրև գլխավոր քերականական իմաստի (իմա՝ անփոփոխական իմաստ): Պրոցես, որ սկսվել էր V դարում (արտա- հայտվելով ինչպես ինքնուրույն գործերում, այնպես էլ թարգմանություննե- րում) և օրինաչափության պետք է վերածվեր լեզվի զարգացման ավելի ուշ շրջանում: Ուստի, բոլորովին պատահական չէր, որ շարահյուսական միևնույն միջավայրում հաճախ միևնույն ժամանակային իմաստ դրսևորվում էր քե- րականական հիմնական և երկրորդական ձևերի միջոցով, և սահմանական ներկան, սահմանական ապառնին և ստորագրասական ապառնիները գործած- վում էին միասին, հաճախ հենց միևնույն նախադասության մեջ՝ նույն ժամա- նակի իմաստով:

V դարի գրականությունը ներկայացնում է այդ պրոցեսի սկզբնավորումը՝ իր զարգացման մեջ:

³⁰ Այն սկսվել էր անցյալ անկատարի բայաձևերի՝ ստորագրասական անցյալի իմաստով կիրառությունների պատճառով: Անցյալ անկատարի բայաձևերի իմաստային կիրառություններն ունեն այն բոլոր առանձնահատկությունները, ինչ տավել է ներկայի բայաձևերի գործածություն- ների կապակցությամբ:

НАСТОЯЩЕЕ ВРЕМЯ ИЗЪЯВИТЕЛЬНОГО НАКЛОНЕНИЯ В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ V ВЕКА

А. Л. ЮЗБАШЯН

Резюме

Форма настоящего времени изъявительного наклонения в грабаре имела синтетическую структуру и выражалась глагольной основой и окончаниями. Настоящее время выражалось также: а) сочетанием глагола и соответствующей глагольной формы, б) посредством инфинитива с предлогом и вспомогательного глагола. В V веке синтетическая конструкция была единственным способом выражения настоящего времени.

Глагольные формы настоящего времени полисемичны. Их инвариантное значение проявляется в различных вариантах (в самой общей форме—конкретное и всеобщее настоящее), лучшие примеры которых дают авторы V века—как историки, так и переводчики. Формы настоящего времени в грабаре вторично употреблялись: 1) *в значении прошедшего времени*, для выражения исторического времени параллельно с глагольными формами прошедшего несовершенного и совершенного; 2) *в значении будущего времени*, выступая в качестве как будущего сослагательного наклонения (соответствует желательному, условному, побудительному будущему современного армянского языка), так и будущего изъявительного, а порой и в значении повелительного наклонения.

Формы настоящего времени в значении будущего употреблялись в зависимости от общего содержания предложения и от структуры предложения. Эти употребления в основном обусловлены определенным синтаксическим окружением. В V веке они встречаются уже так часто, что позволяют выявить обеспечивающие их определенные синтаксические конструкции. Этот процесс должен был привести к упрочению в глагольной форме настоящего времени будущего сослагательного наклонения как главного грамматического значения (т. е. инвариантного значения). Литература V века представляет начало этого процесса в его развитии.